ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-18/2

ք. Երևան << 12>> Դեկտեմբեր 2018թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեքսիբիլիթի Ինտեգրիթի Պրոֆեսիոնալիզմ Սովթվեր» ինք.-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Մկրտչյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 686 400 (Վեց հարյուր ութսունվեց հազար չորս հարյուր) ԱՄՆ դոլլար, ներառյալ ԱԱՀ-ն, բայց ոչ ավել քան 329 787 744 (Երեք հարյուր քսանինը միլիոն յոթ հարյուր ութսունյոթ հազար յոթ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության

մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Ֆլեքսիբիլիթի Ինտեգրիթի Պրոֆեսիոնալիզմ Սոֆթվեր» ինք.
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	Կանադա, 55 Huntingdale Blvd.-PH8 Scarborough, Toronto, ON M1W 2 N9 Country of incorporation, Canada
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Յունիբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011054013	Հ/Հ 24142002635300
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 883861-5
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝	«Ֆլեքսիբիլիթի Ինտեգրիթի Պրոֆեսիոնալիզմ Սոֆթվեր» ինք -ի տնօրեն՝
Ա.Սահակյան	**Ա.Մկրտչյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
« 12 » Դեկտեմբեր 2018 թ. կնքված
ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-18/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ԱՄՆ դոլար	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72261180/3	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություններ Տեխնիկական-բնութագիրը ներկայացված է ստորև	դոլար	686 400	1	Ներկայացված է տեխնիկական բնութագրում	Ներկայացված է տեխնիկական բնութագրում

Պատվիրատու
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Սահակյան

(ստորագրություն)
Կ.Տ

Կատարող
«Ֆլեքսիբիլիթի Ինտեգրիթի Պրոֆեսիոնալիզմ Սոֆթվեր» ինք.
Կանադա, 55 Huntingdale Blvd.-PH8 Scarborough, Toronto, ON M1W 2 N9 Country of incorporation, Canada
«Յունիբանկ» ՓԲԸ

Հ/Հ 24142002635300
ՀՎՀՀ 883861-5
«Ֆլեքսիբիլիթի Ինտեգրիթի Պրոֆեսիոնալիզմ Սոֆթվեր» ինք -ի տնօրեն՝
Ա.Մկրտչյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
CPV-72261180/3

Նպատակը
ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ՄՄԱՏՀ) սպասարկման ծառայությունների իրականացում:

Մատուցվող ծառայությունների շրջանակ
Ապահովել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՄՄԱՏՀ սպասարկում սույն հավելվածով նախատեսված ծառայությունների մատուցումը ստորև ներկայացված համակարգերի համար.

1	Նախնական տեղեկատվություն	Համակարգը նախատեսված է ԱՏԳ իրականացնողի կամ նրա ներկայացուցչի կողմից նախնական տեղեկատվության տրամադրման համար մինչև ապրանքների ժամանումը: Բեռների նախնական տեղեկատվությունը թույլ է տալիս մաքսային մարմնին կատարել ռիսկի գնահատում՝ հիմք ընդունելով բեռի նախնական տեղեկատվությունը: Սա միաժամանակ և անվտանգության և առևտրի դյուրացման գործիք է, քանի որ նախնական տեղեկատվության առկայությունը նպաստում է բեռների արագ սահմանահատմանը:
2	Տարանցման հայտարարագիր	Համակարգն ապահովում է ԵԱՏՄ օրենսդրությամբ սահմանված տարանցման բոլոր դեպքերի համար էլեկտրոնային եղանակով հայտարարագրի ներկայացում և մշակում, ինչպես նաև համապատասխան տեղեկատվության փոխանակում ԵԱՏՄ անդամ-պետությունների միջև:
3	Վճարումների ապահովման կառավարում	Համակարգի նպատակն է ապահովել այն վճարումները և հարկերը սահմանահատման պահին, որոնք կարող են այդ պահին վճարման ենթակա չլինել, սակայն հետագայում անհամապատասխանության դեպքում կարող են լինել անհրաժեշտ: Համակարգը հնարավորություն է ընձեռում նաև վճարումները ապահովել Մաքսային միության անդամ երկրների շրջանակներում:
4	Մաքսային արժեքի հայտարարագիր	Մաքսային արժեքի հայտարարագրի էլեկտրոնային ներկայացման համակարգն ապահովում է գործարքի գնի մեթոդով մաքսային ձևակերպումների իրականացման գործընթացի դյուրինացում և արագացում:
5	Ապրանքների հայտարարագիր	Համակարգը ապահովում է ԱՏԳ իրականացնողների կողմից ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ նախատեսված ապրանքային հայտարարագրի էլեկտրոնային եղանակով ներկայացում և մշակում, ինչպես նաև համապատասխան տեղեկատվության փոխանակում ԵԱՏՄ անդամ-պետությունների միջև:
6	Վիճակագրական ձև	Համակարգի միջոցով ներկայացվում է ԵԱՏՄ անդամ-պետություններից ապրանքների տեղաշարժի դեպքում ապրանքային հայտարարագիրը փոխարինող վիճակագրական ձև էլեկտրոնային եղանակով՝ ապահովելով ԵԱՏՄ անդամ-պետությունների միջև ապրանքների տեղաշարժի հաշվառում
7	Ապրանքների փաստացի ելք	Համակարգը ապահովում է արտահանման հայտարարագրերի ԵԱՏՄ անդամ երկրների սահմաններից դուրս գալու վերաբերյալ փաստացի ելքի գրանցում: Համակարգը ապահովում է մնացորդների հաշվառում և ԵԱՏՄ անդման պետությունների մաքսային ծառայությունների միջև տեղեկատվության փոխանակում:
8	Ապրանքների դասակարգման նախնական որոշում	Համակարգի միջոցով տնտեսվարողը հնարավորություն ունի դիմել մաքսային մարմին կցելով ապրանքը նկարագրող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և ստանալ այն ապրանքի դասակարգումը, որը պետք է ներմուծվի կամ արտահանվի, բացառապես էլեկտրոնային հարթակի միջոցով:
9	Տրանսպորտային հսկողություն	Համակարգի նպատակն է ապահովել ՀՀ սահմանը հատող ավտոմեքենաների (բեռնատարներ և ավտոբուսների ավելի քան 8 նստատեղ) վերահսկողություն:
10	Առողջապահության նախարարության հավաստագիր	Առողջապահության նախարարության հավաստագրերը տրամադրվում են բացառապես էլեկտրոնային եղանակով, ինչը հնարավորություն է տալիս դեղեր և դեղանյութեր ներմուծող տնտեսվարող սուբյեկտներին, մուտք գործելով պորտալ, գրասենյակից առանց ներկայացնել դեղերի և դեղանյութերի ներմուծման հավաստագիր ստանալու հայտը, հետևել հայտի մշակման գործընթացին, ստանալ էլեկտրոնային ծանուցումներ և ներմուծման հավաստագիր: Տնտեսվարող սուբյեկտները ազատված են նաև

		հավաստագրերը թղթային եղանակով մաքսային ծառայությանը ներկայացնելու անհրաժեշտությունից, քանի որ դրանք էլեկտրոնային եղանակով հասանելի են դառնում մաքսային ծառայության համապատասխան աշխատակիցներին:
11	Փոստային առաքանիների հաշվառման համակարգ	Համակարգը հնարավորություն է ընձեռում վարել առաքանիների ամբողջական հաշվառում, դրանց նկատմամբ վերահսկողության իրականացում, իրականացնել գանձվող վճարների կանխատեսումներ, կիրառել վերլուծական գործիքներ, ինչպես նաև իրականացնել նախատեսված վճարների վճարում առանց քաղաքացիների մաքսային մարմիններ ներկայանալու պահանջի:
12	Ռիսկերի կառավարում	ՄՄԱՏՀ-ում իրականացվող գործընթացների մաքսային հսկողության եղանակը որոշող ռիսկերի կառավարման գործիք՝ ստուգման արդյունքների էլեկտրոնային եղանակով հետադարձ կապի ապահովման և ռիսկերի պրոֆիլների արդյունավետության բարձրացման հնարավորությամբ:
13	Փաստաթղթերի միասնական արխիվ	Համակարգը նախատեսում է ապահովել օգտվողի կողմից փաստթղթերի միանգամյա մուտքագրում և սկանավորված տարբերակների ներկայացում, որից հետո ցանկացած պահի տվյալ փաստթղթերը դառնում են հասանելի օգտվողի կողմից դրանք օգտագործելու համար ՄՄԱՏՀ-ի բոլոր համակարգերում:
14	Օգտվողների կառավարում	Համակարգը ապահովում է օգտվող, դեր և ծառայություններ օգտվողի կառավարման ֆունկցիոնալությունը՝ կառավարելու օգտվողների մուտքի հնարավորությունները և թույլտվությունները մաքսային ծառայության կողմից բոլոր համակարգերի համար:
15	Տեղեկատվական աղյուսակների կառավարում	Համակարգը ապահովում է բոլոր տեղեկատուների միասնական կառավարում և կիրառում ՄՄԱՏՀ-ի բոլոր համակարգերի կողմից:
16	Վճարումների կենտրոնացված հաշվառում	Համակարգն ապահովում է մաքսային մարմինների կողմից հավաքագրվող բոլոր վճարների կենտրոնացված հաշվառում և հսկողություն:
17	Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Համակարգը հնարավորություն է տալիս Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից սահմանային անցումային կետում և հետագա մաքսային ձևակերպումների ընթացքում թույլտվությունների տրամադրման գործընթացը կազմակերպել էլեկտրոնային եղանակով
18	Հաշվետվություններ	Համակարգը հնարավորություն է տալիս ՄՄԱՏՀ-ի շրջանակներում գեներացնել հաշվետվություններ՝ ընտրված պարամետրերին համապատասխան, որոնք պարունակում են տեղեկատվություն գործող բոլոր համակարգերից:
19	Կանոնների կառավարում	Համակարգը հանդիսանում է ՄՄԱՏՀ «սպասարկող» համակարգ, որտեղ սահմանվում են այլ համակարգերի գործելու տրամաբանական կանոններ:
20	Մաքսային մուտքի անդորրագիր	Համակարգը հնարավորության է տալիս ապահովել պարզեցված մաքսային ձևակերպումների գործընթաց ֆիզիկական անձանց կողմից տրանսպորտային միջոցների ներմուծում, տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման, ապրանքներն անձնական օգտագործման համար ներմուծման դեպքերում: Համակարգը նաև հնարավորություն է տալիս ՀՀ մաքսային սահմանը հատող մարդատար տրանսպորտային միջոցների հաշվառումը կազմակերպել պարզեցված եղանակով:
21	Ռադիոհաճախականության սարքավորումների ներմուծման արտոնագրի տրամադրման համակարգ	Համակարգը ապահովում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից տրամադրվող ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի լիցենզիաների տրամադրման գործընթացի ամբողջական ավտոմատացում՝ փոխարինելով թղթային եղանակով դիմումների և կից փաստաթղթերի ներկայացման, ընդունման, մշակման և լիցենզիայի տրամադրման գործընթացին:

Համակարգի սպասարկման ծառայությունները ներառում են.

- համակարգերի անխափան աշխատանքը ապահովելու նպատակով անհրաժեշտ ոչ առանցքային փոփոխությունների իրականացում (համակարգերի ոչ առանցքային ծրագրային փոփոխություններ, որոնք կապված են օրենսդրական փոփոխությունների, ինչպես նաև մաքսային վարչարարության առանձին հարցերի լուծման հետ),
- համակարգերի օգտվողներին խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն ցուցաբերող մասնագիտացված խմբերի մոտ ծրագրային ապահովումների մասով ի հայտ եկած հարցերի շուրջ պարզաբանումների տրամադրում,

- սերվերների սպասարկում ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչության համապատասխան աշխատակիցների վերահսկողության ներքո.
    - համակարգերի փոփոխությունների թարմացում և կարգաբերում,
    - սերվերների ծրագրային ապահովման (օպերացիոն համակարգի) պարբերական վերաթարմացում,
    - նոր սերվերների կոնֆիգուրացում՝ ապահովելով համակցումը դրանց և համակարգում առկա սերվերների միջև, սերվերային համակարգում նոր սարքերի ներդման դեպքում սերվերի և սարքավորումների ծրագրային ապահովման կարգաբերում,
    - նոր սերվերներն ու սերվերային սարքավորումները համակարգչային մյուս սարքերի հետ համապատասխան համակցման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
    - սերվերների ծրագրային բաղադրիչների պարբերական վերաթարմացում,
    - սերվերներում պարունակվող տեղեկատվության ամբողջականության և անվտանգության ապահովման կազմակերպման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- տվյալների շտեմարանի (ՏՇ) կարգավորում և սպասարկում ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչության համապատասխան աշխատակիցների վերահսկողության ներքո.
    - ՏՇ-ի ծրագրային ապահովման թարմացումների իրականացում,
    - ՏՇ-ի արխիվացումն իրականացնող ծրագրային ապահովման սպասարկում և արխիվացման կազմակերպման խորհրդատվություն,
    - ՏՇ-ի հետ առնչվող խնդիրների կարգավորման շուրջ խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում խնդիրների վերացման նպատակով միջամուտություն,
    - ՏՇ-ի օպտիմիզացման խնդիրների վերաբերյալ խորհրդատվություն:
- սերվերների և կապուղիների անվտանգության ապահովման, ինչպես նաև օգտվողների համակարգիչներ անթույլատրելի ներխուժումներին, վիրուսային վտանգներին, անթույլատրելի ծրագրերի տեղադրմանն ու չարտոնված այլ գործողություններին հակազդելու վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- համակարգերի և նրա օգտվողների միջև տվյալների փոխանակման ցանցի կարգավորման և սպասարկման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- համակարգերի անխափան աշխատանքն ապահովող սարքավորումների կարգավորման և սպասարկման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- համակարգերում սխալների/թերությունների հետազոտություն և դրանց շտկում, ներառյալ՝ ժամանակավոր լուծումների տրամադրում և թերությունների շրջանցում մինչև համակարգերի կարգաբերումները և թարմացումները,
- թարմացումների մշակում, թեսթավորում, տեղադրում,
- ծրագրային ապահովման նոր տարբերակների տրամադրում և տեղադրում, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերի և նյութերի թարմացում,
- համակարգերի կարգավորում, երբ դրա անգործելիությունը վերագրվում է ծրագային թերություններին կամ սխալներին,
- համակարգերի օգտվողների սպասարկման Help Desk ծառայության տրամադրում:

Ծառայություններին ներկայացվող պահանջները

– Սպասարկման ծառայություններին ներկայացվող պահանջները

ՊԱՀԱՆՋ 1 Կատարողը պետք է իրականացնի մեկ տարվա սպասարկում «Մատուցվող ծառայությունների շրջանակ» բաժնում ներկայացված համակարգերի համար:

ՊԱՀԱՆՋ 2 Համակարգի սպասարկման ժամերն են 9:00 մինչև 18:00 երկուշաբթիից շաբաթ, բացի տոն օրերից: Անհրաժեշտության դեպքում համակարգերի անխափան աշխատանքի ապահովման նպատակով Կատարողը կիրականացնի նաև ընդլայնված սպասարկում՝ ստանալով ծանուցում այդ մասին պատվիրատուից:

– Համակարգերի փոխգործակցության ապահովում

ՊԱՀԱՆՋ 3 Սպասարկման ծառայությունների մատուցումն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել ՄՄԱՏՀ-ում ներդրված և շահագործվող բոլոր համակարգերի և ենթահամակարգերի փոխգործակցությունը: Այս առումով համակարգերի վերակառուցման, ձևափոխման և/կամ թարմեցման դեպքում անհրաժեշտ է նախատեսել փոխկապակցված համակարգերի հետ համապատասխանեցման պահանջը:

– Տեխնիկական առաջադրանքների մշակում/լրամշակում

ՊԱՀԱՆՋ 4 Համակարգերի վերակատուցման կամ ձևափոխման ծառայությունները պետք է նախատեսեն տեխնիկական նկարագրերի (technical specification) մշակում կամ դրանցում համապատասխան փոփոխությունների իրականացում: Համակարգերի տեխնիկական նկարագրերը պետք է մշտապես լրամշակվեն՝ գործառույթային, օրենսդրական փոփոխությունների և այլ գործոններով պայմանավորված համակարգերի վերակառուցման կամ ձևափոխման դեպքում:

– Թեսթավորման իրականացում

ՊԱՀԱՆՋ 5 Ծրագրային ապահովումները պետք է նախքան տեղադրումը փորձարկվեն թեսթային միջավայրում:

ՊԱՀԱՆՋ 6 Համակարգի ընդունման թեսթավորման և շահագործման ընթացքում բացահայտված թերությունները պետք է գրանցվեն Կատարողի հատուկ համակարգում, որին մուտք պետք է տրամադրվի ՀՀ մաքսային մարմնի համապատասխան աշխատակիցներին: Յուրաքանչյուր այդպիսի գրառում իրենից ներկայացնելու է էլեկտրոնային թերթիկ (ticket), որը կներառի խնդրի/թերության մանրամասն նկարագրությունը, վերարտադրման քայլերը և այլ լրացուցիչ տեղեկատվություն (օր.՝ լուծման առաջարկ, հղում փաստաթղթին):

ՊԱՀԱՆՋ 7 Համակարգերի թեսթավորման համար պետք է առնվազն կիրառվեն հետևյալ ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ թեսթավորման տեսակները:

Թեսթի տեսակ	Նպատակ
Կոդի թեսթավորում Code testing	Իրականացվում է ծրագրավորման ինժեներների կողմից ծրագրային միավորի իրականացման ժամանակ:
Համակարգի միավորի թեսթ Unit testing	Կիրառվում է արդեն պատրաստ մեկ միավորի՝ ենթագործառույթի ստուգման համ
Ինտեգրման թեսթ Integration testing	Ուղղված է բացահայտելու տարբեր ենթահամակարգերի և երրորդ կողմի համակարգերի հետ ինտեգրման արդյունքում առաջացած խնդիրները:
Հետանցման թեսթ Regression testing	Իրականացվում է նոր ծրագրային միավորի կամ նոր համակարգի գործառույթի ներդրման ժամանակ՝ բացառելու նոր հավելումների արդյունքում նախորդ գործառույթների թերությունները:
Արտադրողականության թեսթ Performance testing	Բացահայտում է համակարգի արձագանքները ոչ ստանդարտ և չնախատեսված իրավիճակներում, ինչպես նաև երրորդ կողմերի համակարգերի հետ փոխազդեցության արդյունքում առաջացած համակարգի արտադրողականության խնդիրները:
Բեռնավորման թեսթ Load te ting	Նպատակն է պարզել համակարգի կարողությունները մեծաքանակ օգտագործողների համաժամանակյա աշխատանքների կամ մեծածավալ տվյալների հոսքի ժամանակ:
Համատեղելիության թեսթ Compatibility testing	Գնահատում է համակարգի համատեղելիությունը համակարգչային տարբեր միջավայրների հետ ներառյալ՝ գործավար համակարգը, սարքաշարը, ցանցային թողունակությունը, զննիչները, տվյալների շտեմարանները և այլն:
Օգտագործման հարմարավետության թեսթ Usability testing	Ուղղված է բացահայտելու համակարգի կիրառման թերությունները, օգտագործման հարմարավետության աստիճանը և համապատասխանությունը համակարգի օգտագործողների լսարանին՝ վերջնական օգտագործողներին:
Անվտանգության թեսթ Security testing	Ստուգում է համակարգի անվտանգությունը, այնտեղ փոխանակվող և պահվող տվյալների ապահովությունն ու մատչման վավերականությունը:
Համընդհանուր թեսթ System testing	Համակարգի համընդհանուր թեսթավորումն է, որն ուղղված է ստուգիչ վերջնական թեսթավորում իրականացնելու համար՝ ըստ Համակարգի բիզնես տրամաբանության և գործառույթների փոխազդեցության:
Օգտագործողի ընդունման թեսթ User Acceptance Testin (UAT)	Կատարում է նախագծի գլխավոր պատվիրատուն/շահառուն՝ Կատարողի բիզնես վերլուծաբանների օգնությամբ՝ համակարգի ամբողջական ֆունկցիոնալությունը վավերացնելու համար: Սովորաբար իրականցվում է ընհանուր համակարգի կամ դրա որևէ ենթահամակարգի ամբողջական թողարկումից առաջ:

– Ուսուցման իրականացում

ՊԱՀԱՆՋ 8 Կատարողը պետք է իրականացնի վերակառուցված կամ ձևափոխված համակարգերի վերաբերյալ ուսուցումներ:

ՊԱՀԱՆՋ 9 Կատարողը մինչև համակարգերի ներդրումը պետք է ներկայացնի ուսուցման ծրագիր:
Ուսուցման ծրագիրը պետք է կազմված լինի.
Համակարգից օգտվողների ուսուցման սկզբունքով,
Վերապատրաստողների վերապատրաստման սկզբունքով,
ՀՀ մաքսային մարմնի SS ոլորտի աշխատակիցների ուսուցման սկզբունքով:

ՊԱՀԱՆՋ 10 Դասընթացի նկարագրությունը պետք է ներառի, բայց չսահմանափակվի հետևյալով.
դասընթացի անվանում,
դասընթացի նպատակ,
մատուցման մեթոդներ,
դասընթացի տևողությունը և մասնակիցների քանակը մեկ դասընթացի համար,
դասընթացի բովանդակության և պլանի նկարագրություն,
դասընթացն անցկացնողի որակավորումն ու փորձը:

ՊԱՀԱՆՋ 11 Ուսուցման ընթացքում պետք է ներկայացվեն համակարգի օգտվողի ձեռնարկներ, որոնք պետք է առնվազն ներառեն հետևյալը.
համակարգի/ենթահամակարգի նկարագրություն,
գործառույթների նկարագրություն,
հաղորդագրությունների նկարագրություն, ներառյալ՝ համակարգի սխալների վերաբերյալ հաղորդագրությունների նկարագրություն,
գործնական օրինակներ/պատկերներ,
համակարգերի վերականգնման, պահուստավորման (backup, restore) ընթացակարգերի նկարագրություն (SS անձնակազմի համար):

ՊԱՀԱՆՋ 12 Ուսուցման լեզուն պետք է լինի հայերեն: Եթե ատարողը ընկերությունը ուսուցումներ անցկացնելու համար ներգրավում է օտարերկրյա փորձագետ, ապա թարգմանչական ծառայությունները վճարվում են իր կողմից:

ՊԱՀԱՆՋ 13 Փոխանցված բոլոր տեսակի տեղեկություններն ու գիտելիքները պետք է լինեն փաստաթղթավորված և Կատարողը պետք է բոլոր փաստաթղթերը տրամադրի պատվիրատուին թե՛ տպված, թե՛ էլեկտրոնային կրիչով:

– Համապատասխանություն օրենսդրությանը

ՊԱՀԱՆՋ 14 Համակարգերը պետք է համապատասխանեն ՀՀ, ԵԱՏՄ օրենսդրությանը, համապատասխան միջազգային պայմանագրերին և համաձայնագրերին:

– Կիրառվող տեխնոլոգիաներ

ՊԱՀԱՆՋ 15 Կատարողը պետք է առաջարկի այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք համազոր են պատվիրատուի կողմից ներկայումս կիրառվող տեխնոլոգիաներին, գործող ենթակառուցվածքը և գործընթացները խթանելու նպատակով պետք է առավելագույնս օգտագործվի գործող SS ենթակառուցվածքը:

ՊԱՀԱՆՋ 16 Եթե Կատարողը կիրառելու է այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք տարբերվում են պատվիրատուի կողմից ներկայումս կիրառվող տեխնոլոգիաներից, ապա Կատարողը պետք է պատվիրատուի հետ նախօրոք համաձայնեցնի համապատասխան լիցենզիաների ձեռքբերման եղանակներն ու պայմանները:

ՊԱՀԱՆՋ 17 Կատարողը համակարգերի մշակման, զարգացման, փոփոխությունների և հավելումների իրականացման ընթացքում պետք է հաշվի առնի համատեղելիությունը ներկայումս կիրառվող տեղեկատվական համակարգերի հետ:

ՊԱՀԱՆՋ 18 Վերակառուցված համակարգերը պետք է ներդրվեն երեք առանձին միջավայրերում՝ արտադրական, թեսթավորման, պահուստային:

ՊԱՀԱՆՋ 19 Դերերի կառավարման համակարգը պետք է լինի միասնական: Պետք է տրամադրվի դերերի կառավարման արդյունավետ գործիք, որը թույլ կտա ստեղծել համակարգի ցանկացած մոդուլի և գործառույթի օգտագործման թույլտվություններ, խմբեր և այլն:

ՊԱՀԱՆՋ 20 Կիրառվող դասակարգիչները պետք է լինեն միասնական:

ՊԱՀԱՆՋ 21 Օպերացիոն համակարգ RedHat Linux:

ՊԱՀԱՆՋ 22 Տվյալների շտեմարանը՝ Oracle 11 RDBMS:

– Արտադրողականություն

ՊԱՀԱՆՋ 23 Համակարգերը պետք է աշխատեն 24/7 ռեժիմով:
Համակարգի սարքին վիճակում լինելու ժամանակը պետք է լինի 99.5 տոկոսից ավել: Սա նշանակում է, որ համակարգի՝ տարեկան անսարք վիճակում լինելու ժամանակը պետք է լինի 1.83 օրից պակաս: Սպասարկման և թարմացումների նպատակով համակարգերի անջատումները պետք է լինեն պլանային և անպայմանորեն համաձայնեցվեն մաքսային մարմնի համապատասխան աշխատակիցների հետ: Համակարգերի վթարային անջատումները չեն կարող գերազանցել 4 (չորս) ժամը, եթե պատճառը անսարք սարքավորման փոխանակման նպատակով նոր սարքավորման բացակայությունը չէ:

ՊԱՀԱՆՋ 24 Համակարգերը պետք է կարողանան արդյունավետ կերպով սպասարկել առավելագույնը 5000 օգտվողի:
Համաժամանակյա ակտիվ օգտվողների առավելագույն շեմը սահմանվում է մինչև 400 օգտվող:

ՊԱՀԱՆՋ 25 Առավելագույն ծանրաբեռնվածության պայմաններում համակարգի 95% ֆունկցիոնալության արձագանքման ժամանակահատվածը պետք է կազմի առավելագույնը 4 վայրկյան:

– Անվտանգություն

ՊԱՀԱՆՋ 26 Տվյալների մակարդակում պետք է կատարվեն միջոցառումներ անձնական տվյալների անվտանգությունը տվյալների շտեմարանների անվտանգ կառուցվածքի միջոցով ապահովելու համար, ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

ՊԱՀԱՆՋ 27 Համակարգերը պետք է իրականացնեն տեղեկատվության ցանկացած փոփոխության, ցանկացած գործողության գրանցում (logging). Օգտագործողի բոլոր գործողությունները պետք է գրանցվեն գրանցամատյանում: Գրանցամատյանների միջոցով պետք է հնարավոր լինի հետևել, թե երբ և ում կողմից ինչ գործողություններ են իրականացվել համակարգում:
Գրանցումը, ի լրումն այլ տեղեկատվության, պետք է ներառի գործողության ժամը, IP հասցեն, կատարողի ինքնությունը և այլն:
Կիրառվեն փոփոխությունների աուդիտի ներդրված մոտեցումներին համապատասխան:

ՊԱՀԱՆՋ 28 Համակարգերը պետք է ավտոմատ կերպով <<արգելակեն>> օգտվողի աշխատաշրջանը՝ օգտվողի <<անգործության>> սահմանված ժամանակաշրջանից հետո՝ այդ մասին հաղորդագրության ուղարկելով օգտվողին:

– Գործածելիություն

ՊԱՀԱՆՋ 29 Օգտվողի միջերեսը պետք է լինի հարմար օգտագործման և դյուրին յուրացման համար: Կիրառվող տերմինները պետք է լինեն հասկանալի և մատչելի վերջնական օգտվողի համար:

ՊԱՀԱՆՋ 30 Համակարգերը պետք է ապահովեն օգտվողի հեշտ և հարմար տեղաշարժը տարբեր մոդուլների միջև:

– Լեզվի ընտրություն

ՊԱՀԱՆՋ 31 Համակարգերի միջերեսները պետք է լինեն երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

ՊԱՀԱՆՋ 32 Պետք է հնարավոր լինի տվյալները, ինչպես նաև տեղեկատու աղյուսակները մուտքագրել երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

– Բացահայտված թերություններ

ՊԱՀԱՆՋ 33 Կատարողի տրամադրած ծրագրային պահովումները և մատուցված ծառայությունները պետք է զերծ լինեն նախագծման, ծրագրային և այլ թերություններից, որոնք կարող են հանգեցնել համակարգերի և/կամ վերջինիս բաղկացուցիչ մասերի ոչ պատշաճ աշխատանքին, նախանշված պահանջների չկատարմանը, կատարողականության, հուսալիության, ընդլայնման, արտադրողականության խափանմանը:

ՊԱՀԱՆՋ 34 Սպասարկման ընթացքում համակարգերի նախագծման, ծրագրավորման կամ Կատարողի կողմից մատուցված ծառայությունների հետ կապված որևէ թերության բացահայտման դեպքում Կատարողը պետք է պատվիրատուի հետ խորհրդակցի և բացառապես իր ֆինանսական միջոցներով վերացնի խնդիրը:

ՊԱՀԱՆՋ 35 Կատարողը պատասխանատու չի լինի առաջացած վնասի կամ թերության վերացման համար հետևյալ դեպքում՝

պատվիրատուի կողմից համակարգերի ոչ պատշաճ գործարկում կամ պահպանում,

պատվիրատուի կամ երրորդ կողմի միջոցով համակարգում փոփոխություններ անելու դեպքում, որը նախատեսված չէ տեխնիկական առաջադրանքով և չի հաստատվել Կատարողի կողմից:

ՊԱՀԱՆՋ 36 Թերության բացահայտման դեպքում պատվիրատուն պետք է ծանուցի Կատարողին այդ մասին՝ ներկայացնելով թերության նկարագրությունը՝ առկա ողջ փաստարկներով:

ՊԱՀԱՆՋ 37 Համակարգերի փոփոխությունների ընդունման թեսթի արդյունքները դասակարգվելու են հետևյալ սկզբունքով.

Արգելափակող (Blocker)

Արգելափակող սխալ, որը բերում է համակարգի աշխատանքի խափանմանը, որի արդյունքում համակարգի կամ դրա հիմնական գործառույթների հետ հետագա աշխատանքը անհնար է դառնում:

Կրիտիկական (Critical)

Կրիտիկական սխալ, որի արդյունքում համակարգի բիզնես տրամաբանությունը սխալ է, առկա է անվտանգության խնդիր, առաջանում է սերվերի խափանում և այլն:

Հիմնարար/կարևոր (Major)

Բիզնես տրամաբանության հիմնական մասը ճիշտ չէ աշխատում, թերությունը կրիտիկական չէ, հնարավոր է շարունակել աշխատանքը թեսթավորվող համակարգի հետ:

Աննշան (Minor)

Աննշան սխալ, որը չի խախտում թեսթավորվող հատվածի բիզնես տրամաբանությունը, օգտվողի միջերեսի ակնհայտ խնդիր:

Չնչին (Trivial)

Չնչին խնդիր, որը չի վերաբերում բիզնես տրամաբանությանը, վատ վերարտադրվող սխալ, որը օգտվողի միջերեսից հիմնականում տեսանելի չէ, երրորդ կողմի գրադարանների, ծառայությունների հետ կապված խնդիր, որը չունի որևէ ազդեցություն համակարգի ընդհանուր որակի վրա:

ՊԱՀԱՆՋ 38 Թեստավորման արդյունքում ներքոնշյալ դեպքերում համակարգերը չեն ընդունվելու պատվիրատուի կողմից.

Արգելափակող (Blocker) որևէ սխալի առկայություն,

Կրիտիկական (Critical) որևէ սխալի առկայություն,

Հիմնարար/կարևոր (Major) 2-ից ավել սխալի առկայության դեպքում,

Աննշան (Minor) 5-ից ավել սխալի առկայության դեպքում

Չնչին (Trivial) 10-ից ավել սխալի առկայության դեպքում:

– Իրավական պայմաններ

ՊԱՀԱՆՋ 39 Պայմանագրով մատուցված ծառայությունների արդյունքները հանդիսանում են պատվիրատուի սեփականությունը: Պատվիրատուն իրավունք ունի օգտագործել, հրատարակել, փոխանցել, տեղափոխել դրանք իր հայեցողությամբ, առանց որևէ սահմանափակման՝ չխախտելով հեղինակների անձնական ոչ գույքային իրավունքները:

ՊԱՀԱՆՋ 40 Կատարողը պատվիրատուին է տրամադրում համակարգերի փոփոխությունների ծրագրային ապահովմանն առնչվող ամբողջ նյութերը (ծրագրային կոդեր, տվյալների շտեմարանի և այլ կիրառական ծրագրերի տեղակայման սցենարներ, կիրառական ծրագրեր, գրադարաններ, ֆայլեր, փաթեթներ և այլ ծրագրային ապահովումներ, որոնք հարկավոր են համակարգի բնականոն աշխատանքի և նոր ապարատային ապահովման վրա համակարգի ներդրման, կոնֆիգուրացման, շահագործման համար, համակարգերի ներդրումը նկարագրող մանրամասն փաստաթուղթ, որտեղ հմուտ մասնագետների համար հասկանալի ձևով նշված կլինեն համակարգերի ներդրման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները, կիրառական սերվերները, գրադարանները, դրանց տարբերակները, ներդրման քայլերի հաջորդականությունը և այլն, համակարգերը նկարագրող տեխնիկական փաստաթղթերը) և այլ փաստաթղթերը:

Կատարողը պատվիրատուին ներկայացնում և երաշխավորում է, որ.

- Պատվիրատուին տրված ծրագրային ապահովման կոդը և փաստաթղթերը ամբողջական են, պատշաճ կերպով կազմված և ճշգրիտ պատճեն են ծրագրային ապահովման վերջնական ընդունման ժամանակահատվածում շահագործվող ծրագրային ապահովման տարբերակի:

- Ցանկացած լրամշակումից հետո 15 օրվա ընթացքում Կատարողը պատվիրատուին կտրամադրի փոփոխված ծրագրային կոդը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը, որոնք նույնպես պետք է լինեն ամբողջական, պատշաճ կերպով կազմված և համապատասխանեն լրամշակված ծրագրային ապահովման գործող տարբերակին:

- Ծրագրային կոդը կպարունակի ողջ տեղեկատվությունը՝

ընթեռնելի տարբերակով այնպես, որ ծրագրավորողը կամ վերլուծաբանը կարողանա պահպանել և բարելավել ծրագրային ապահովումը: Ծրագրային կոդը և համապատասխան

փաստաթղթերը պետք է պարունակեն ծրագրավորողի բոլոր մեկնաբանությունները, տեղեկատվության մոդելները, գործընթացների հերթագայության սխեմաները և այլն:

Ծառայության մատուցման ժամկետը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

Պատվիրատու
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան

(ստորագրություն)

Կ.Տ

Կատարող
«Ֆլեքսիբիլիթի Ինտեգրիթի Պրոֆեսիոնալիզմ Սոֆթվեր» ինք.
Կանադա, 55 Huntingdale Blvd.-PH8 Scarborough, Toronto, ON M1W 2 N9 Country of incorporation, Canada
«Յունիբանկ» ՓԲԸ

Հ/Հ 24142002635300
ՀՎՀՀ 883861-5
«Ֆլեքսիբիլիթի Ինտեգրիթի Պրոֆեսիոնալիզմ Սոֆթվեր» ինք -ի տնօրեն՝

Ա.Մկրտչյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
«12» Տարի 2018 թ. կնքված
ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-18/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ԱՄՆ դոլար

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվինք, ըստ ամիսների՝ ընդ որում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	4232	72261180/3	Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայություններ Տեխնիկական-բնութագիրը ներկայացված է ստորև				68 640	137 280	205 920	274 560	343 200	411 840	480 480	549 120	686 400	**686 400**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Պատվիրատու
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

ք. Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Սահակյան

(ստորագրություն)
Կ.Տ

Կատարող
«Ֆլեքսիբիլիթի Ինտեգրիթի Պրոֆեսիոնալիզմ Սոլթվեր» ինք.
Կանադա, 55 Huntingdale Blvd.-PH8 Scarborough, Toronto, ON M1W 2 N9 Country of incorporation, Canada

«Յունիբանկ» ՓԲԸ
Հ/Հ 24142002635300
ՀՎՀՀ 883861-5
«Ֆլեքսիբիլիթի Ինտեգրիթի Պրոֆեսիոնալիզմ Սոլթվեր» ինք -ի տնօրեն՝
Ա.Մկրտչյան

(ստորագրություն)

Հավելված 3
«12» Մարտ 2018թ. կնքված
ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-18/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ՝ «____» «_____» 20 թ. Դուրս գրված N հաշիվ-ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«12» Դեկտեմբեր 2018 թ. կնքված
ՊԵԿ-ՀԲՄ-ԾՁԲ-18/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն